



ԵՅԳԾ Տեղեկագիր

Երիտասարդության եւ համայնքների գործողությունների ծրագրի եռամսյակային հրատարակություն



№ 2 (7)
2009 թ. ապրիլ-հունիս



USAID
FROM THE AMERICAN PEOPLE

ԵՅԳԾ-ն ԱՄՆ ԱԶԳ կողմից ֆինանսավորված հնգամյա ծրագիր է, որը մեկնարկել է 2004թ. հոկտեմբերին: Ծրագիրը գործում է Դայաստանի 80 համայնքներում եւ նպատակ ունի խթանելու քաղաքացիների մասնակցությունը հանրային հարցերի լուծման գործում: Ծրագրի շրջանակներում համայնքներին տրամադրվում է կազմակերպչական աջակցություն երիտասարդական գործունեության ակունքներ (ԵԳԱ) եւ Զամայնքների գործունեության հանձնաժողովներ (ԶԳԶ) հիմնադրելու համար: ԵՅԳԾ-ն ֆինանսավորում չի տրամադրում համայնքների կողմից նախաձեռնվող եւ իրականացվող ծրագրերի համար: Սույն տեղեկագրում նկարագրված նախաձեռնությունները կազմակերպվել են համայնքների կողմից եւ ֆինանսավորվել են տեղական տարբեր հովանավորների կամ դոնոր կազմակերպությունների կողմից:

Վերապահում. Սույն տեղեկագրի տպագրումը հնարավոր է դարձել ԱՄՆ Միջազգային զարգացման գործակալության աջակցության շնորհիվ՝ Կրթության զարգացման ակադեմիայի կողմից իրականացվող Երիտասարդության եւ համայնքների գործողությունների ծրագրի շրջանակներում: Սույն տեղեկագրի մեջ արտահայտված տեսակետները եւ կարծիքները պարտադիր չէ, որ արտահայտեն ԱՄՆ կառավարության կամ ԱՄՆ Միջազգային զարգացման գործակալության տեսակետները:

Տավուշի մարզի ԵՅԳԾ խմբերը գործում են՝ բարձրացնելու համայնքների բնակիչների իրազեկությունը եւ խթանելու մասնակցությունը

Ապրիլի 10-ին, Գանձաքարի ԶԳԶ-ն իր հիմնադրման առաջին տարեդարձը նշելու նպատակով գյուղատարած հյուսիսում կազմակերպեց և իրականացրեց համայնքային մեծ միջոցառում: Ընդհանուր թվով մոտ 90 հյուրեր՝ գյուղատարած հյուսիսի, ղարոցի, եկեղեցու ներկայացուցիչներ, համայնքի այլ անդամներ եւ հարեան համայնքների բնակիչներ ներկայացել էին մասնակցելու միջոցառմանը, շնորհավորելու ԶԳԶ-ին՝ գործունեության մեկամյակի առթիվ եւ տեղեկանալու ԶԳԶ-ի առաջիկա ծրագրերի մասին: Միջոցառման ընթացքում ԶԳԶ-ն հանդես եկավ իր կողմից համայնքում իրականացված ծրագրերի եւ դրանց արդյունքների մասին մանրամասն հաշվետվությամբ, որն ուղեկցվում էր համապատասխան նկարների ցուցադրմամբ: ԶԳԶ անդամները հյուրերին ներկայացրեցին նաեւ իրենց առաջիկա ծրագրերը եւ բոլորին հրավիրեցին միամալու եւ մասնակցելու համայնքում կյանքի բարելավմանն ուղղված իրենց նախաձեռնություններին: Զամայնքի բնակիչները եւ հյուրերը՝ մեծապես տպավորված ԶԳԶ-ի կողմից իրականացված գործունեությամբ եւ ԶԳԶ-ի ձեռքբերումներով, նրանց մաղթեցին նորանոր հաջողություններ եւ խոստացան աջակցել ԶԳԶ-ի բոլոր նախաձեռնություններին: Գանձաքարի ԶԳԶ-ի առաջին տարեդարձը վերածվեց համայնքային մեծ միջոցառման, որն էլ ավելի համայնքեց համայնքի բնակիչներին եւ նրանց հպար-

տություն հաղորդեց ԶԳԶ-ի եւ իրենց սեփական գյուղի համար, ինչպես նաեւ ամրապնդեց վառ ապագա ունենալու նրանց հույսը: Մայիսին, հանրային խնդիրների հասցեագրման գործում համայնքի բնակիչների ներգրավվածությունը բարձրացնելու եւ տեղական իշխանությունների աշխատանքներում նրանց մասնակցությունը խթանելու նպատակով Բերդավանի ԵԳԱ-ն նախաձեռնեց գյուղում տեղադրել դիմումների, բողոքների եւ առաջարկների արկղեր: ԵԳԱ անդամները հանդիպեցին գյուղապետի հետ՝ ներկայացնելու իրենց առաջարկը, համաձայն որի գյուղի մարդաշատ վայրերում նախատեսվում է տեղադրել արկղեր՝ դիմումների, բողոքների եւ առաջարկությունների համար, ինչպես նաեւ ստեղծել հատուկ հանձնաժո-

ղով, որը կզբաղվի բնակիչների կողմից բարձրացված հարցերով, կհանդիպի համապատասխան կառույցների ներկայացուցիչների հետ, կքննարկի առաջարկները եւ կհասցեագրի բողոքները: Գյուղապետը իր հավանությունը տվեց ԵԳԱ-ի ծրագրին եւ համաձայնեց միջոցներ հատկացնել դրա իրականացման համար: ԵԳԱ անդամները, ովքեր ներկայումս գյուղատարած հյուսիսի ներկայացուցիչների հետ միասին զբաղված են արկղերի պատրաստմամբ եւ տեղադրմամբ, վստահ են, որ իրենց նախաձեռնությունը կնպաստի տեղական իշխանությունների գործունեության արդյունավետության բարձրացմանը, կխթանի համայնքի բնակիչների մասնակցությունը տեղական իշխանությունների աշխատանքներին եւ հանրային հարցերի լուծմանը:



Գանձաքարի ԶԳԶ-ի (Տավուշի մարզ) հաշվետու միջոցառումը՝ նվիրված ԶԳԶ-ի գործունեության առաջին տարեկիցին

Մարզահովիտի ԶԳԶ-ն հասցեագրում է համայնքի հերթական խնդիրը

Մայիս ամսին Մարզահովիտի ԶԳԶ-ն (Լոռու մարզ) գործել է՝ հասցեագրելու համայնքում նոր վերանորոգված Կրթամշակութային համալիրի շենքում սանհանգույցի բացակայության խնդիրը: ԶԳԶ անդամները հանդիպել են գյուղապետի հետ՝ քննարկելու այդ հարցը եւ տեղեկացել են, որ կրթամշակութային համալիրի վերանորոգման համար հաստատված բյուջեի որոշակի մասը չի փոխանցվել համայնքին, ինչի պատճառով էլ չհնարարական աշխատանքներն անավարտ են մնացել, եւ չի կառուցվել նախատեսված հատակագծով նախատեսված սանհանգույցը: Խնդիրը հասցե-

գրելու նպատակով ԶԳԶ-ն պատրաստել է իրավիճակը նկարագրող նամակ եւ ուղարկել է այն ԶԶ վարչապետին՝ հայցելով վերջինիս աջակցությունը կրթամշակութային կենտրոնի վերանորոգման համար նախատեսված լրիվ գումարը համայնքին փոխանցելու պատճառների պարզաբանման եւ կրթամշակութային համալիրի շենքում սանհանգույցի կառուցման խնդրի լուծման հարցում: Նամակն ուղարկելուց կարճ ժամանակ անց ԶԳԶ-ն տեղեկացվել է, որ իրենց նամակը հղվել է Լոռու մարզպետարանի քաղաքաշինության բաժին, որտեղից էլ ԶԳԶ-ին

պատասխանել են, որ հաշվի առնելով Կրթամշակութային համալիրի դերն ու նշանակությունը համայնքի կյանքում, ապագա մարզային ծրագրերից որևէ մեկում կներառվեն միջոցներ Մարզահովիտի կրթամշակութային համալիրի սանհանգույցի կառուցման համար՝ ըստ համապատասխան նախահաշվի: ԶԳԶ-ն հետեւողական է լինելու համայնքային այս խնդրի լուծման հարցում եւ այդ նպատակով նախատեսում է սերտորեն համագործակցել Լոռու մարզպետարանի քաղաքաշինության բաժնի հետ եւ հետեւել աշխատանքների կատարմանը:

Այս համարում նաեւ	
<i>Շիրակի մարզի ԵՅԳԾ ակտիվ խմբերը բարձրացնում են համայնքային խնդիրներ եւ պաշտպանում են համայնքի շահերը</i>	2
<i>Գեղեղային խնդիրների վերաբերյալ հարցում Արեւի համայնքում</i>	2
<i>Լրագրողական դասընթաց Պոլճինում</i>	2
<i>Քարակերտի ԵԳԱ-ն պաշտպանում է համայնքի շահերը</i>	3
<i>Մարտունու ԵԳԱ-ն խթանում է քաղաքացիական ակտիվությունը հարեան՝ Այգուտ համայնքում եւ սեփական օրինակով ոգեւորում իրենց հասակակիցներին լինել ավելի ակտիվ</i>	3
<i>Գառնահովիտի ԶԳԶ-ն փորձում է լուծում գտնել գյուղի երիտասարդների գործազրկության խնդիրն</i>	3
<i>ԵՅԳԾ համայնքների համագործակցություն. Տավուշ եւ Արարատ մարզերի ԶԶԶ ենթահանձնաժողովների գործունեությունը (Շարունակությունը՝ 4-րդ էջին)</i>	3

ԵՅԳԾ-ում ընդգրկված համայնքներ

- Ներկայումս հանրապետության տարածքում գործում է երիտասարդական գործունեության 37 ակունք եւ Զամայնքի գործունեության 43 հանձնաժողով
- Ամենամիտր համայնքը 2ուվաչենն է, որն ունի 206 բնակիչ, իսկ ամենամեծը՝ Դիլիջանը՝ 16,202՝ բնակիչ
- Անցած չորս տարիների ընթացքում ծրագրին մասնակցել է ավելի քան 2,000 կամավոր եւ իրականացվել է ավելի քան 1,200 քաղաքացիական նախաձեռնություն

*2001թ. մարտի ամսին, <http://www.armsat.am>



Շիրակի մարզի ԵՅԳԾ ակտիվ խմբերը բարձրացնում են համայնքային խնդիրներ և պաշտպանում են համայնքի շահերը

Ապրիլին, Հայկաձորի ՀԳԳ-ն քայլեր է ձեռնարկել լուծելու համայնքի առաջնահերթ խնդիրներից մեկը՝ գյուղում կառավարող կառուցումը, ինչը կապահովի հեռավոր և մեկուսացված Հայկաձոր գյուղի կապը Շիրակի մարզկենտրոն Գյումրու և Հայաստանի մայրաքաղաք Երևանի հետ: Տարիներ շարունակ Հայկաձորն ուղիղ կապի միջոց չի ունեցել Գյումրի և Երևան քաղաքների հետ, ինչը տարաբնույթ դժվարություններ է ստեղծել համայնքի բնակիչների համար: Ներկայումս, գյուղի տարածքով անցնում է գործող՝ Երևան-Գյումրի երկաթուղին, սակայն տասնյակ տարիներ առաջ կառուցված Հայկաձորի կառավարողը, որը չի շահագործվել նախկին ԽՍՀՄ փլուզումից հետո, ամբողջովին քանդվել է: ՀԳԳ անդամները պատրաստեցին նամակ և այն ուղարկեցին «Հարավ-կովկասյան երկաթուղի» ՓԲԸ-ին, հայցելով ընկերության աջակցությունը Հայկաձորում կառավարողի կառուցման և գյուղում երկաթուղային կայարանի առկայության դեպքում երկաթուղին կդադարի Հայկաձորի, Գյումրու և Երևանի միջև կապի հիմնական միջոցը և համայնքի բնակիչները մշտապես կօգտվեն երկաթուղուց՝ տեղաշարժվելու, ապրանք և գյուղատնտեսական մթերք տեղափոխելու համար:

տույցի կառուցման և գյուղում երկաթուղու կայարանի բացման հարցում: Նամակում ՀԳԳ անդամները հայտնել են նաեւ նախաձեռնության աջակցելու և կառավարողի կառուցման աշխատանքներին մասնակցելու իրենց պատրաստակամությունը: Այժմ ՀԳԳ-ն և ողջ համայնքը անհամբերությամբ սպասում են «Հարավ-կովկասյան երկաթուղի» ՖԲԸ-ի պատասխանին և հուսով են, որ այն կլինի դրական, քանզի Հայկաձորում կառավարողի կառուցման դեպքում կշահի թե՛ համայնքը, թե՛ երկաթուղին աշխատացնող ընկերությունը: Գյուղում կառավարողի և երկաթուղային կայարանի առկայության դեպքում երկաթուղին կդադարի Հայկաձորի, Գյումրու և Երևանի միջև կապի հիմնական միջոցը և համայնքի բնակիչները մշտապես կօգտվեն երկաթուղուց՝ տեղաշարժվելու, ապրանք և գյուղատնտեսական մթերք տեղափոխելու համար:

Հունիսին, Բավրայի ՀԳԳ-ն նախաձեռնել էր շահերի պաշտպանության քարոզարշավ՝ պաշտպանելու համայնքի բնակիչների իրավունքը՝ օգտագործելու Վրաստանի հետ Հայաստանի սահմանագծից ներս՝ մաքսատնից 1կմ հեռավորությամբ գտնվող համայնքի հողերը: Գյուղի բնակիչների խորին համոզմամբ այդ հողերը պատկանում են համայնքին, և իրենք իրավունք ունեն դրանք օգտագործել որպես գյուղատնտեսական հողեր կամ արտադրարկեր, սակայն սահմանապահներն արգելում են նրանց օգտագործել այդ հողերը: Համայնքի բնակիչների շահերը պաշտպանելու նպատակով Բավրայի ՀԳԳ անդամները հանդիպում ունեցան գյուղապետի հետ, քննարկեցին հարցի հետ կապված՝ համայնքի բնակիչների տեսակետը և նրանց պահանջը, և գյուղապետին խնդրեցին հրավիրել իրավաբան, ով կկարողանա իրենց խորհրդատվություն տրամադրել հարցի վերաբերյալ: Իրավաբանի հետ խորհրդակցելու

և համայնքի բնակիչների պահանջի օրինակաբանության մեջ հանդգնելուց հետո ՀԳԳ անդամները հանդիպեցին սահմանապահների հետ և իրավաբանի օգնությամբ կարողացան նրանց ապացուցել, որ Բավրա համայնքը իրավունք ունի շահագործելու իրեն պատկանող այդ հողատարածքները: Համայնքի բնակիչները շատ ուրախ էին տեղեկանալու համայնքի իրավունքները և շահերը պաշտպանելու գործում ՀԳԳ-ի ունեցած հաջողության մասին: Իսկ ՀԳԳ անդամները որոշել են այս հարցի վերջնական լուծման նպատակով կրկին հրավիրել իրավաբան, ով կօգնի նրանց ստանալ գրավոր և իրավական ուժ ունեցող փաստաթուղթ, որը կհաստատի, որ այդ հողատարածքները պատկանում են Բավրա համայնքին և կարող են օգտագործվել համայնքի բնակիչների կողմից որպես գյուղատնտեսական հողեր կամ արտադրարկեր:

Գեղերային խնդիրների վերաբերյալ հարցում Արենի համայնքում

Ապրիլին, Արենիի ՀԳԳ-ն (Վայոց ձորի մարզ) նախաձեռնեց համայնքում իրականացնել գեղերային խնդիրների վերաբերյալ հարցում: ՀԳԳ անդամները մշակեցին հինգ հարցից կազմված հարցաթերթիկ և անցկացրեցին հարցումը համայնքի բնակիչների՝ տարիքային տարբեր խմբեր ներկայացնող կանանց և տղամարդկանց շրջանում: Հարցաթերթիկում ընդգրկված հարցերն էին. գիտե՞ք արդյոք ինչ է գեղերը, Ձեր կարծիքով մեր համայնքում հավասար են արդյոք կանանց և տղամարդկանց իրավունքները, կուզե՞նայիք արդյոք, որ մեր համայնքն ունենար կին ղեկավար, կարո՞ղ է արդյոք կինը լինել ընտանիքի զվիավորը, կցանկանայիք մասնակցել գեղերային

խնդիրների վերաբերյալ դասընթացների կամ քննարկումների: Հարցման արդյունքները ցույց են տվել, որ համայնքի բնակիչներն այդքան էլ հստակ չեն պատկերացնում, թե ինչ է նշանակում «գեղերը», ինչպես նաեւ այն, որ համայնքում դեռեւս գերիշխող են կարծրատիպերը: Հարցվողների մեծամասնությունը համայնքի ղեկավարի պաշտոնում նախընտրում է տեսնել տղամարդ, ինչպես նաեւ գտնում է, որ ընտանիքի զվիավորը կարող է լինել միայն տղամարդը: Արենի գյուղում տղամարդկանց և կանանց իրավունքների հավասարության մասին հարցին հարցվողների մեծ մասը տվել է բացասական պատասխան՝ նշելով, որ իրենց համայնքում տղամարդիկ և կանայք չունեն

հավասար իրավունքներ: Ինչ վերաբերվում է վերջին հարցին՝ հարցման բոլոր մասնակիցները արտահայտել են իրենց հետաքրքրվածությունը գեղերային հարցերի վերաբերյալ և հայտնել են այդ թեմայով սեմինարների և քննարկումների մասնակցելու իրենց ցանկության մասին: Հարցման արդյունքների ամփոփումից հետո ՀԳԳ անդամները գյուղում կազմակերպեցին քննարկում-քանակե՞՞ համայնքի բնակիչներին հարցման արդյունքները ներկայացնելու և նրանց հետ միասին դրանք քննարկելու նպատակով: Հանդիպման սկզբում ՀԳԳ նախագահ Աննա Ղազարյանը մասնակիցներին ներկայացրեց գեղերային հարցերի և գեղերային հավասարության վերաբերյալ ժամանակակից պատկերա-

ցումները, այնուհետև համայնքի բնակիչների շրջանում իրականացված հարցման արդյունքները: Հարցաթերթիկում ընդգրկված հինգ հարցերի վերաբերյալ ծավալվեց բուռն քննարկում: Հանդիպման ավարտին մասնակիցներից շատերը խստովազեցին, որ բանավեճի արդյունքում որոշակիորեն փոխվեցին գեղերային հարցերի վերաբերյալ իրենց տեսակետները, և բոլորը համաձայն էին այն հարցում, որ հանդիպումը շատ հետաքրքիր է օգտակար էր. այն օգնեց բարձրացնել համայնքի բնակիչների իրազեկվածությունը գեղերային խնդիրների մասին և կանանց դրդեց վերանայել առաջնորդության վերաբերյալ իրենց դիրքորոշումը և ավելի ակտիվ դեր ստանձնել իրենց ընտանիքներում, սոցիալական և քաղաքական կյանքում:

Լրագրողական դասընթաց Պտղնիում

Մայիսին, Պտղնու ԵԳԱ-ն (Վոտայքի մարզ) կազմակերպեց լրագրողական դասընթաց՝ համայնքի դպրոցի 8-10 դասարանցիների համար: ԵԳԱ-ի նախաձեռնությամբ նպատակ ուներ խթանելու երիտասարդների մասնակցությունը հանրային հարցերի լուծմանը՝ նրանց զինվելով նամակներ, դիմումներ, կարծ պատմություններ և հոդվածներ գրելու համար անհրաժեշտ հմտություններով, որպեսզի նրանք կարողանան բարձրաձայնել իրենց կարծիքները և իրենց հուզող հարցերը: Դասընթացը վարեց մասնագիտությունը լրագրող՝ ԵԳԱ անդամ Տաթև Մնացականյանը, ով փրկով կիսեց իր գիտելիքները լրագրողական հմտություններ ձեռք բերել ցանկացող երիտասարդների հետ:

Նյութի (լրագրության հիմունքներ, ոճաբանություն, գործող կանոններ և այլն) ներկայացումից հետո մասնակիցները ստացան հանձնարարություններ, որոնք նրանք պետք է կատարեին մինչև հաջորդ հանդիպումը: Հետագա դասընթացների ժամանակ երիտասարդները ներկայացնում և քննարկում էին իրենց կողմից գրված հոդվածները և պատմությունները: Ըստ մասնակիցների՝ դասընթացը շատ արդյունավետ էր, նրանք ձեռք բերեցին լրագրության վերաբերյալ բավականաչափ գիտելիքներ և հմտություններ, որոնք նրանք պատրաստվում են կիրառել կարելու հարցեր բարձրացնելու և նամակների, դիմումների ու հոդվածների միջոցով իրենց ծայր լսելի դարձնելու նպատակով:

Քարակերտի ԵԳԱ-ն պաշտպանում է համայնքի շահերը

Մայիսին, Քարակերտի ԵԳԱ (Արմավիրի մարզ) անդամները որոշեցին հասցեագրել համայնք ներկրվող խնդիրը ջրի անբավարար որակի խնդիր: Գյուղում խնդիր ջրի պակասի պատճառով Քարակերտ համայնքի բնակիչները ստիպված են գնել գյուղ ցիստերններով ներկրվող ջրից, և վերջերս համայնքի բնակիչների շրջանում առաջացել են դժգոհություններ՝ կապված այդ ջրի որակի հետ: Խնդիրը լուծելու նպատակով ԵԳԱ-ն նամակ պատրաստեց և ուղարկեց սանիտարափոխանակ վերահսկողության մարզային բաժին՝ առաջարկելով ստուգել վաճառքի համար Քարակերտ ներկրվող խնդիր ջրի որակը և մշակել համայնքում վաճառվող ջրի որակը մշտապես վերահսկո-

ղության տակ պահելու մեխանիզմ: Հունիսին, Արմավիրի մարզպետարանի սանիտարափոխանակ վերահսկողության բաժնի ներկայացուցիչները ԵԳԱ անդամներին տեղեկացրեցին, որ ի պատասխան իրենց նամակի՝ Քարակերտում վաճառվող ջրի կառուցվելու տարին երկու անգամ ջրի որակը վերահսկողության տակ պահելու և ջրի միջոցով ցանկացած վարակի տարածումը կանխելու նպատակով: ԵԳԱ անդամները հետեւողական են լինելու համայնք ներկրվող խնդիր ջրի որակի ստուգման աշխատանքներին՝ հետեւելով, որ այդ ջրով համապատասխան ջրի որակի հաստատված չափանիշներին, և համայնքի բնակիչներին պարբերաբար տեղեկացնելու են ջրի որակի ստուգման արդյունքների մասին:



Մարտունու ԵԳԱ-ն խթանում է քաղաքացիական ակտիվությունը հարեւան՝ Այգուտ համայնքում եւ սեփական օրինակով ոգեւորում իրենց հասակակիցներին լինել ավելի ակտիվ

Ապրիլին, Մարտունու ԵԳԱ-ն (Գեղարքունիքի մարզ) կազմակերպել էր 2008թ. ապրիլին ակունքի հիմնադրման պահից սկսած համայնքում ԵԳԱ անդամների կողմից իրականացված նախաձեռնությունների եւ ծրագրերի ներկայացումը հարեւան՝ Այգուտ համայնքի երիտասարդների համար: ԵԳԱ-ի այս նախաձեռնությունը նպատակ ուներ խթանելու Այգուտի երիտասարդների քաղաքացիական ակտիվությունը եւ նրանց ներգրավվածությունը հանրային խնդիրների լուծման գործում: ԵԳԱ անդամները գտնում են, որ Մարտունու եւ Այգուտի ման փոքր համայնքներն ավելի մեծ հաջողությունների կհասնեն համայնքային խնդիրների լուծման եւ համայնքներում կյանքի բարելավման գործում, եթե աշխատեն միասին՝ միաբանելով իրենց ջանքերն այդ խնդիրների լուծման համար: Այգուտ համայնքի երիտասարդները, ովքեր ներկա գտնվեցին Մարտունու ԵԳԱ-ի մեկնայակին նվիրված հաշվետու հանդիպմանը, տպավորված էին Մարտունու իրենց հասակակից-

ների կողմից նախաձեռնված եւ իրականացված գործունեությամբ: Նրանք բազմաթիվ հարցեր ուղղեցին Մարտունու ԵԳԱ անդամներին եւ նրանց խնդրեցին օգնել իրենց համայնքում երիտասարդական գործունեության կենտրոն հիմնելու գործում: Մարտունու ԵԳԱ անդամներն իրենց պատրաստակամությունը հայտնեցին օգնելու Այգուտի երիտասարդներին իրենց համայնքում քաղաքացիական ակտիվ խումբ ձևավորելու հարցում: Տեսնելով իրենց համայնքի երիտասարդների խանդավառվածությունը՝ Այգուտի դպրոցի տնօրենը եւ ուսուցիչները եւս խոստացան աջակցել երիտասարդների այդ նախաձեռնությանը եւ տրամադրել համապատասխան տարածք, որը կծառայի որպես երիտասարդական գործունեության կենտրոն: Մարտունու ԵԳԱ անդամները պայմանավորվեցին Այգուտ գյուղ իրենց հաջորդ այցի վերաբերյալ, որի ընթացքում նրանք նախատեսում են Այգուտի երիտասարդների հետ



Մարտունու ԵԳԱ-ի (Գեղարքունիքի մարզ) կողմից Այգուտ համայնքի երիտասարդների համար կազմակերպված սեմինար

կիսել խմբի ձևավորման, կազմակերպչական հարցերի, համայնքի կարիքների զննահատման եւ գործողությունների պլանավորման իրենց փորձը: Մարտունու ԵԳԱ անդամների կարծիքով հարեւան համայնքի երիտասարդների հետ համագործակցությանն ուղղված իրենց առաջին քայլը շատ արդյունավետ էր, եւ նրանք մտա-

դրված են շարունակել զարգացնել այդ համագործակցությունը, Այգուտի երիտասարդների հետ կիսել իրենց գիտելիքները, հմտություններն ու փորձը, ինչպես նաեւ միասին ծրագրել եւ իրականացնել Գեղարքունիքի մարզի գյուղական համայնքներում կյանքի բարելավմանն ուղղված նախաձեռնություններ:

Գառնահովիտի ՉԳՅ-ն փորձում է լուծում գտնել գյուղի երիտասարդների գործազրկության խնդիրն

Ստահոված լինելով գյուղի երիտասարդների գործազրկության խնդրով՝ Գառնահովիտի ՉԳՅ-ն (Արագածոտնի մարզ) ապրիլին նախաձեռնեց եւ իրականացրեց այդ թեմայով քննարկում Թալինի Զբաղվածության տարածքային գործակալության աշխատակից Անահիտ Աբգարյանի հետ: Հանդիպման մասնակիցները քննարկեցին գյուղական համայնքներում երիտասարդների զբաղվածության հնարավորությունների մեծացման հետ կապված բազմաթիվ հարցեր: Քննարկված առաջարկներից էին երիտասարդների համար տանը աշխատելու պայմանների ստեղծումը, պատվերների ստացման եւ պատվիրատուի պատրաստի ապրանքի/մթերքի ուղարկման հնարավորությունների ստեղծումը, երիտասարդներ-

ի ներգրավումը հանրային աշխատանքներում, հմուտ երիտասարդներին արտերկրում աշխատանք գտնելու հարցում աջակցության տրամադրումը, փոքր եւ միջին բիզնեսով զբաղվելու համար արտոնյալ վարկերի ստացման հնարավորությունները եւ այլն: Մասնակիցներից ոմանք՝ հիմնականում գործազուրկ երիտասարդները, իրենց ղժգհությունն արտահայտեցին Զբաղվածության գործակալության աշխատանքի արդյունավետության եւ գործազուրկների ու նրանց խնդիրների նկատմամբ պետության անտարբերության կապակցությամբ: Երիտասարդները նշեցին, որ աշխատանք չունենալու հետեւանքով նրանք սոցիալապես մեկուսացված են, չեն կարողանում մասնակցություն ունենալ համայնքի կյանքում եւ իրենց զգալ

հասարակության լիիրավ անդամ: Հանդիպման մասնակիցները նաեւ իրենց անհամաձայնությունն արտահայտեցին խոսնակի կողմից ներկայացված այն դրույթի հետ, ըստ որի այն անձինք, ովքեր ունեն գյուղատնտեսական նշանակության հողի սեփականություն կամ վարձակալություն, համարվում են աշխատանք ունեցողներ եւ, համաձայն «Բնակչության զբաղվածության եւ գործազրկության դեպքում սոցիալական պաշտպանության մասին» ՀՀ օրենքի, չեն կարող օգտվել գործազրկության նպաստից: Քննարկումից հետո ՉԳՅ-ն այդ հարցի կապակցությամբ նամակ պատրաստեց եւ ուղարկեց ՀՀ Ազգային ժողով: Նամակում ՀՀ անդամները արտահայտել են իրենց անհամաձայնությունը վերոհիշ-

յալ դրույթի հետ, ներկայացրել են իրենց փաստարկները եւ առաջարկել այդ կետի վերանայումը: ՀՀ անդամները պատրաստեցին նաեւ մեկ այլ նամակ, որում ներկայացրեցին Գառնահովիտ գյուղում զբաղվածության հետ կապված իրավիճակը եւ խնդրի լուծմանն ուղղված իրենց առաջարկները, եւ այդ նամակն ուղարկեցին Թալինի Զվարճվածության տնօրենին: ՀՀ անդամները հուսով են, որ իրենց ջանքերը կտան դրական արդյունք, եւ համապատասխան կառույցներն ավելի մեծ ուշադրությամբ եւ արդյունավետությամբ կզբաղվեն երիտասարդների զբաղվածությանն առնչվող խնդիրների լուծման գործով:

ԵՀԳԾ համայնքների համագործակցություն. Տավուշ եւ Արարատ մարզերի ՀՀՍ Ենթահանձնաժողովների գործունեությունը

ԵՀԳԾ համայնքների համագործակցության նախաձեռնության շրջանակներում ՀՀՍ մարզային ենթահանձնաժողովներն ակտիվորեն ներգրավված են եղել համայնքային եւ մարզային մակարդակներում առկա խնդիրների լուծման նպատակով տարբեր նախաձեռնությունների պլանավորման եւ իրականացման գործում:

◆ Հունիսին, Տավուշի մարզի ՀՀՍ ենթահանձնաժողովն ամփոփեց մարզի ութ համայնքներում անցկացված սոցիոլոգիական հարցման արդյունքները: Ընդհանուր առմամբ հարցմանը մասնակցել է 360 մարդ: Հարցման արդյունքում

պարզվել է, որ համայնքներում առկա ընդհանուր խնդիրներից են խնելու ջրի պակասը, աղբահանության մեխանիզմի բացակայությունը, աշխատատեղերի սակավությունը, գազի բացակայությունը, ոռոգման ջրի ցանցի բացակայությունը, դպրոցի շենքի վերանորոգման անհրաժեշտությունը եւ դպրոցներում կրթության ցածր որակը: Որպես այս խնդիրների պատճառներ՝ հարցվողների 78% նշել է «Ֆինանսական միջոցների պակասը», 20.7%՝ «տեղական իշխանությունների անգործությունը» եւ 2.7%՝ «անտարբերությունը»: Հարցման արդյունքները վեր են լուծվել նաեւ ըստ

առանձին համայնքների, եւ համապատասխան նամակներ են պատրաստվել եւ ուղարկվել ութ համայնքների ղեկավարներին: Նամակներում ենթահանձնաժողովի անդամները համայնքների ղեկավարներին են ներկայացրել իրենց համայնքի բնակիչների կողմից բարձրացված խնդիրները եւ առաջարկել են համագործակցել նրանց լուծման գործում: Ենթահանձնաժողովը նաեւ պատրաստվում է նամակ ուղարկել Տավուշի մարզպետին՝ տեղեկացնելու նրան մարզում անցկացված հարցման եւ դրա արդյունքների մասին, ինչպես նաեւ խնդրելու հանդիպում մարզպետի հետ՝ Տավուշի

մարզի համայնքներում առկա խնդիրների լուծման միջոցները քննարկելու նպատակով: Ենթահանձնաժողովի անդամները նաեւ պատրաստում են հարցման արդյունքները լուսաբանող հոդված, որը կտպագրվի «Տավուշ» մարզային թերթում: Տավուշի մարզի ՀՀՍ ենթահանձնաժողովը վճարկանորեն է տրամադրված շարունակելու համայնքների մոբիլիզացման եւ տարբեր կառույցների հետ համագործակցության միջոցով Տավուշի մարզի համայնքների խնդիրների լուծմանն ուղղված իրենց գործունեությունը: (Շարունակությունը՝ 4-րդ էջին)

Կրթությանը զարգացման ակադեմիա
 Այգեժոր 10,
 0019 Երևան
 Հայաստանի Հանրապետություն

Հեռ.՝ (374 10) 225 636
 Ֆաքս՝ (374 10) 275 686
 Էլ փոստ՝ ycap@aed.am

Երիտասարդության եւ համայնքների գործողությունների ծրագիր



Academy for Educational Development

We're on the Web!
<http://ycap.am>
<http://aed.am>

ԵՀԳԾ համայնքների համագործակցություն. Տավուշ եւ Արարատ մարզերի ՀՀՄ ենթահանձնաժողովների գործունեությունը

(Սկիզբը՝ էջ 3)

◆ Ապրիլին, Արարատի մարզի ՀՀՄ ենթահանձնաժողովը նախաձեռնեց եւ իրականացրեց Խոր Վիրապի եկեղեցու շրջակայքի մաքրման ակցիա եւ ծառատունկ: Նախաձեռնության իրականացման համար ենթահանձնաժողովի անդամները հանդիպում ունեցան Արարատի մարզպետարանի ներկայացուցիչների հետ եւ խնդրեցին նրանց աջակցությունը ակցիայի անցկացման համար անհրաժեշտ պարագաների (ծեռնոցներ, տոպրակներ, եւ այլն) ձեռքբերման հարցում: Արարատի մարզի ՀՀՄ ենթահանձնաժողովի անդամները ակցիայի մասին տեղեկացրեցին նաեւ իրենց համայնքների ղեկավարներին: Վերջիններս համաձայնեցին աջակցել ակցիայի իրականացմանը՝ տրամադրելով տրանսպորտային միջոց համայնքի բնակիչներին Խոր Վիրապ տեղափելու համար, կամ էլ փոխհատուցելով նրանց ճանապարհածախսը: ՀՀՄ ենթահանձնաժողովի անդամներն իրենց նախաձեռնությունը քննարկեցին նաեւ Լուսարատ համայնքի ղեկավարների հետ եւ ակցիայի կազմակերպման գործում համագործակցեցին Լուսարատի բնակիչների հետ, քանի որ Խոր Վիրապ եկեղեցին գտնվում է այդ համայնքի տարածքում:

Ապրիլի 9-ին, Արարատի մարզի՝ ԵՀԳԾ 8 համայնքներից ակցիայի իրականացման համար Խոր Վիրապ ժամանած մոտ 50 կամավորները՝ Լուսարատ համայնքից նրանց միացած եւս 50 կամավորների հետ միասին իրականացրեցին մաքրման եւ ծառատունկման ակցիան: Դեպի Խոր Վիրապ եկեղեցի տանող մոտ 2կմ երկարությամբ ճանապարհը եւ եկեղեցու տարածքը մաքրվեցին պլաստիկ շշերից, տոպրակներից եւ այլ աղբից: Այնուհետեւ, եկեղեցու տարածքում տնկվեցին 30 դեկորատիվ ծառեր, որոնք ՀՀՄ ենթահանձնաժողովին տրամադրվել էին Մխչյանում գործող «Էկոգեն» ՀԳ-ի կողմից: Ակցիայի օրը կամավորներին այցելեցին Արարատի մարզպետն ու մարզպետարանի այլ ներկայացուցիչներ եւ նրանց հետ քննարկեցին մարզի բնապահպանական խնդիրները: Արարատի մարզի ՀՀՄ ենթահանձնաժողովի կողմից կազմակերպված ակցիան լուսաբանվեց մարզային լրատվամիջոցներով: Ակցիան նաեւ նկարահանվեց եւ ցուցադրվեց մարզային «Աննա» հեռուստաալիքով: Ենթահանձնաժողովի անդամները հուսով են, որ իրենց նախաձեռնությունը կոգեշնչի այլ համայնքների երիտասարդներին եւս լինել ավելի ակտիվ եւ ներգրավված հանրային խնդիրների լուծման գործում:



Խոր Վիրապ եկեղեցու շրջակայքի մաքրման եւ ծառատունկման ակցիա՝ նախաձեռնված Արարատի մարզի ՀՀՄ ենթահանձնաժողովի կողմից

ԵՀԳԾ-ն ԱՄՆ ՄԶԳ կողմից ֆինանսավորված հնգամյա ծրագիր է, որը իրականացվում է Կրթությանը զարգացման ակադեմիայի (ԿԶԱ) կողմից: ԵՀԳԾ հիմնական նպատակն է **ծրագրում ընդգրկված յուրաքանչյուր համայնքում սերմանել անհատի կամ անձանց խմբի՝ որպես հանրային շահերի պաշտպան ծառայելու գաղափարը եւ դրա կարելությունը:**

Ծրագրի երեք հիմնական բաղադրիչներն են.

1. Ստեղծել մեխանիզմներ, որոնց միջոցով կխթանվի երիտասարդների եւ համայնքների այլ անդամների մասնակցությունն իրենց համայնքներում հանրային հարցերի լուծման գործընթացին՝ աջակցելով համայնքներում երիտասարդության, համայնքային եւ հանրային խնդիրների լուծմանը զբաղվող երիտասարդական գործունեության ակունքների (ԵԳԱ) եւ Համայնքների գործունեության հանձնաժողովների (ՀԳՀ) հիմնադրմանը:
2. Ավելացնել երիտասարդների եւ համայնքների այլ անդամների՝ քաղաքացիական ակտիվության բարձրացման եւ հանրային հարցերի լուծման գործընթացում ավելի ակտիվ մասնակցելու համար անհրաժեշտ գիտելիքները/հմտությունները՝ երիտասարդներին եւ համայնքի այլ անդամներին տրամադրելով հնարավորություններ, որոնք կօգնեն բարձրացնել նրանց իրազեկությունը, հարստացնել գիտելիքները եւ զարգացնել հմտությունները, որոնք անհրաժեշտ են երիտասարդությանը, համայնքի այլ անդամներին եւ հանրությանը հուզող խնդիրները հաջողությամբ լուծելու համար:
3. ԵԳԱ/ՀԳՀ-ներն իրականացնեն ծրագրեր, որոնք կբարձրացնեն քաղաքացիական ակտիվությունը եւ մասնակցությունը, կբխեն հանրության եւ համայնքի շահերից, կնպաստեն համայնքներում հանրային հարցերի լուծման գործում սիստեմատիկ բարեփոխումների իրականացմանը եւ կխթանեն համայնքի կարիքների լուծման համար ավելի կայուն մոտեցումների որդեգրումը:

Ներկայումս, Արարատի ՀՀՄ ենթահանձնաժողովը ծրագրում է հասցեագրել մարզում հաճախակի տեղի ունեցող ավտովթարների խնդիրը: Ստահոգված լինելով վերջին ժամանակաշրջանում ավտովթարների եւ դրանց հետեւանքով զոհերի աճող թվով՝ ենթահանձնաժողովը համագործակցում է մի շարք կազմակերպությունների՝ այդ թվում նաեւ պետավտոտեսչության հետ, կազմակերպելու քննարկում՝ ներկայիս իրավիճակի շտկման համար լուծումներ գտնելու նպատակով: Ենթահանձնաժողովի անդամները մշակել են հարցաթերթիկ եւ պատրաստվում են մարզում անցկացնել հարցում՝ պարզելու բնակչության կարծիքը ավտովթարների թվի աճի հիմնական պատճառների, ճանապարհի առավել վտանգավոր հատվածներում զգուշացնող լրացուցիչ նշանների տեղադրման կամ սթափեցնող պաստառների փակցման եւ դարձրեցներում ճանապարհային անվտանգության կանոնների դասընթացների անհրաժեշտության վերաբերյալ:

Հարցաթերթիկում մարզի բնակիչներին խնդրվում է նաեւ մշել ճանապարհի ամենավտանգավոր հատվածները եւ առաջարկել, թե ինչպես կարելի է նվազեցնել ավտովթարների վտանգը: Հարցումը նախատեսվում է անցկացնել հուլիս-օգոստոս ամիսների ընթացքում, ինչից հետո Արարատի ՀՀՄ ենթահանձնաժողովը նախատեսում է հարցման արդյունքները ներկայացնել հանրությանը եւ առաջարկել կոնկրետ լուծումներ իրավիճակի բարելավման համար: Ենթահանձնաժողովը նաեւ նախատեսում է կազմակերպել սպափեցնող պաստառների եւ կոչերի մրցույթ՝ թվով ավելի շատ մարդկանց նախաձեռնության մեջ ներգրավելու եւ հարցի վերաբերյալ իրազեկությունն էլ ավելի բարձրացնելու նպատակով: Պաստառների ցուցահանդեսը եւ լավագույն պաստառի ընտրության գործընթացը պլանավորված է կազմակերպել եւ իրականացնել սեպտեմբերի սկզբին՝ հանրային քննարկման օրը: